ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<04>> Դեկտեմբեր 2013թ. N 11

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 145 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ՀՀ տրանսպորտային տեսչության պետի 2013 թվականի փետրվարի 22-ի N 24/24.2/2043-13 գրությունը.

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2009 թվականի հոկտեմբերի 26-ի «Մրցութային հանձնաժողով ստեղծելու և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2007 թվականի սեպտեմբերի 12 N 110 կարգադրությունն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 145 կարգադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1/ կարգադրության 2-րդ կետում <<Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի Հայաստանի Հանրապետության տրանսպորտային տեսչության Արմավիրի մարզի տարածքային բաժնի գլխավոր մասնագետ Աշոտ Խաչատրյանին» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության տրանսպորտային տեսչության Արարատի և Արմավիրի մարզերի տարածքային բաժնի պետ Միհր Բաբաջանյան>> բառերով:

2. Սույն կարգադրություն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ***Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ***